1035

Գիտություններ
և
հարություններ

82
Ա-85

Թիֆլիս
1905

2011

450

Հրատարակութիւն Անդէրսօնի

ՓԷՍԱՅՈՒՆԵՐ
ԵՒ
ՀԱՄՆԱՅՈՒՆԵՐ

Ջերօմ Կ. Ջերօմի։

Թարգմ. Միսաբեկ. Մարտիրոսեանց

ԹԻՖԼԻՍ
Արազատիպ Ա. Քութաթելաձէի, Նիկ. 21.
1905

2003

82
Ն-55

Հրատարակութիւն Անդէրսօնի

ՓԵՍԱՑՈՒՆԵՐ
ԵՒ
ՀԱՐՍՆԱՑՈՒՆԵՐ

Ջերօմ Կ. Ջերօմի։

Թարգմ. Միսարեգ. Մարտիրոսեանց

ԹԻՖԼԻՋ
Հրատարակ. Ա. Քուրթաթիւրաժեի, Նիկ. 21.
1905

Дозволено Цензурою, Тифлисъ, 27 апрѣля 1905 г.

60928-ա

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
Ա. ԱՄ. Ա. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

4

3968-73

ՀԱՐՍՆԱՑՈՒՆԵՐ,

I

Ես ձեզ եմ դիմում սիրելի անկեղծ օրիորդներ։ Ինչպէս միշտ հարկաւոր է ձեզ զգուշացնել ապշեցնող երիտասարդների դէմ, որոնք անխնայ կերպով պարտեցնումեն ձեր գեղեցիկ բայց անփորձ գլուխը։ Դուք ոչ մի ժամանակ չէք կարող ճշմարիտն իմանալ, որ ձեր սիրեցեալի թոյլ հառաչանքը շատ անհաստատ հիմք է ընտանեկան բաղդաւորութեան համար։ Ձեր սիրելին ամեն ժամանակ չի հառաչիլ և գեղեցիկ խօսքեր միշտ չի ասիլ։ Բաւական է որ նա դարնայ ձեր ամուսինը և այդ ամենը կփոխվի։ Նա կսկսի հայհոյել, երանդով պաշտպանել ամուսնական պատիւը, և ամեն բանին կասկածով կվերաբերվի, պատճառներ որոնելով կռուելու։

Առաջ, քանի որ դուք վերջնականապէս վճռեք ամուսին ընտրել, ինչպէս ասածէ, հազար չափիր և մէկ կտրիր։ Մտաբերեցէք որ

ամուսինը շոր չէ, որ կարող լինիք վերադարձնել դերձակին նորից շինելու, լայնացնել եթէ սեղմումէ, կամ նեղացնել թէ որ լայն է։ Երբոր ցուրտ եղանակ սկսվի և տեսնէք որ շորը չի տաքացնում. մի կողմ դնէք և տաք բան հագնէք. Ինչպիսին ընտրել էք այնպէս է լ կմնայ ամբողջ կեանքում։ Ուրեմն նայեցէք որ նա պիտանի լինի մշտական։

Առաջին անգամ նուրը ձեզ երևումէ հրապուրիչ։ Գեղեցիկ, նարաձև նկարով, գոյնն էլ սքանչելի։ Բայց վերցրէք և ուշադրութեամբ զննեցէք չէ գունաթափվում արդեօք? Ուղիղ է շոշափելիս նիւթը կակուղ է երևում և բաւականին տաք։ Բայց արդեօք փթած չէ և լաւ դիմացկուն է?

Նա երևում է այնպէս ազնիւ, քաջ և արի։ Նրա գանգուր մազերը հիանալի են։ Նա այնպէս սքանչելի հագնվածէ։ (արդեօք վճռումէ նա հաշիւը դերձակին)։ Ինչպէս ջերմ և քնքշութեամբ համբուրումէ նա ձեր ձեռքերը։ Եւ ինչպիսի փաղաքշական անուններ է ձեզ համար հնարում։ Ինչպէս ամուր սեղմում է ձեր մեջքը նրա ուժեղ ձեռքը։ Եւ որքան փաղաքշանք, որքան քնքշութիւն կան նորա գեղեցիկ աչքերում, երբ նա ձեզ նայում է։

Բայց արդեօք կհամբուրի նա ձեր

քնքոյշ ձեռքերը, երբ նրանք պառաւին և կնճռոտվեն։ Կհնարի արդեօք նա ձեզ համար սրտառուչ անուններ, երբոր երեխան գիշերը սկսի լալ և դուք չկարողանաք իսկոյն հանդարտացնել։ կամ, աւելի լաւ, չի վերցնիլ նա արդեօք երեխային իւր ձեռքը 'որովհետև իսկ ձեզ կառաջարկի գնալ հանգստանալու։ Այդպէս արդեօք սաստիկ կըզգաք նրա օգնութիւնը հոգսի և նեղութեան օրերում։ Վերջապէս կլինի արդեօք նրա հայեացքը նոյն սիրով և քնքշութեամբ որոնել ձեր աչքերը երբ նրանք արտասուքով ցաված լինին։

II

Ոհ, ինչպէս յաճախ, մեր երիտասարդութեան ժամանակ անցնում ենք անգոյն, անփոյթ մարդկանց մօտով արհամարհանքի և կարեկցութեան ժպիտով։ Մենք ինչպէս միամիտ երեխայք, որոնց ճակատում, բացի աչքերից, ոչինչ չկայ, մեկնում ենք ձեռքներիս և պահանջում ենք թարմ, պայծառ, գեղեցիկ ծաղիկներ, ուշադրութեան չդարձնելով, չը ցանկանալով իմանալ ինչ է թաղնուած այդ

փայլուն արտաքինի յետևը։ Մենք ցանկանում ենք ստեղծել մեր փոքրիկ կեանքի այգուց, ապշեցուցիչ առասպելական անկիւն, որի վերա ամենքը կզմայլին և կնախանձին։ Ես այդ և խնդութեան և բաղդաւորութեան ապաստանարանում, կբուսնին միմիայն շուշանները և ֆվարդեր; իսկ տնակը ամեն կողմից փաթաթուած կլինի Բոյսերով։ Ոհ, ինչպէս հրաշալի և լաւ տեսք կունենայ պայծառ արեգակային օր, մանաւանդ թեթև քամու ժամանակ երբ կբուրէ մօտակայ դաշտերի ծաղիկների և խոտերի անուշահոտութիւնը։ Ուղիղ չէ ալդեօք ոչինչի հաւասարի այդ տեսարանի հետ։ Այո, բայց մենք ինչպէս կդողանք և կսարչենք այստեղ, երբ կփչի ցուրտ քամին, կթափի անձրև և կբարձրանայ փոթորիկ։

Կան միւս տեսակ, աւելի հանդարտաբարոյ և ուժեղ մարդկութեան օրինակներ։ Նրանք չեն փայլում գեղեցկութեամբ, բայց աւելի զօրեղին և յուսալի։ Նրանք միշտ միատեսակ փափկասէր և խաղաղասէրներ են։ գարունը անկարող է ներշնչել նրանց մէջ աւելի կեանք, ամառը անզօր է խանձել իւր ջերմ ճառագայթներով։ Նրանք չեն գունաթափուել աշնան սկսվելուն, ձմեռը չի մերցնել նրանց մէջ երանդը։ Նրանք աչքի չեն ընկնում ոչ

խելքով, ոչ հրապուրանքով, բայց այդ նրանց չի խանգարում լինել ուրիշներից աւելի խելօք և համակրելի։ Բնութիւնը փորձուած խանութպանի նման, ամենևին ի ցոյց չէ դնում իւր լաւ ապրանքը։

Նրանք հանդարտ յետ են դարձնում ճակատագիր հարուածը և համարձակ գնում են ամբողջ աշխարհի դէմ։ Երբ հարկաւորէ նրանք աներկիւղ մրցում են մահուան և կեանքի հետ։

Կեանքի փոթորիկը խորտակվում է նրանց գլխի վրայ, կատաղի ծեծում է քամին և փոթորիկը, փոխվելով սարնամանիքների, բայց շատ եղանակները անցնում էն, իսկ նրանք առաջուան պէս կանգնած են, միշտ այնպէս հանդարտ և զորեղ և աւելի հաստատուն։ Ինչպէս ամեն կենդանի արարած, նրանք էլ են սիրում կեանքի փայլը, նրա բաւականութիւնը և խնդութիւնը, բայց նրանց գլուխները ոչ մի ժամանակ չեն խոնարվել անյաջողութեան ծանրութեան տակ, տրտմութիւնը և դժբաղդութիւնը չեն դրոշմում յուսահատ արտայտութիւն նրանց պարզ դեմքի վերայ։ Մեր բարեբաղդութիւնը անկարողէ տատանել նրանց բարեկամութիւնը, իսկ մեր անյաջողութիւնը սառեցնել նրան։

Այդպիսի մարդկանցը կարելի է յենվել

ինչպէս ժայռի վրայ։ Նրանցը պէտք է ապաւինել, նրանցը հարկաւոր է մտերմացնել ձեզ հետ։ Նրանք պէտք կգան ինչպէս ժայռ փոթորկալի օվկիանոսում։ Մեր կեանքի երջանիկ օրերում նրանցը հազիւ ենք մտաբերում։ Նրանք այնպէս պարզեն, այնպէս աննշան, որ չեն կարող շողոքորդել ոչ մեր ինքնասիրութիւնը և ոչ մեր սնապարծութիւնը։ Հասարակութեան մէջ նրանք ուղիղ անտանելի են։ Նրանք Վատ խօսակից են, և ոչ թէ միայն իրանք են լռում, բայց և չեն էլ սիրում երբ ուրիշներն են խօսում։ Նրանք գարշելի եղանակ ունին և բոլորովին զուրկ են հմտութիւնից։ Ցայտնվելով աշխարհական ծանօթների շրջանում, նրանք իւրեանց չեն կարողանում ցոյց տալ օգտաւէտ կերպով։ Նրանք քիչ են հոգս քաշում իւրեանց հագուստի մասին, և նրանց զարդարանքն էլ միշտ անճաշակ է և անճոռնի։ Եթէ մէզ պատահում է փողոցում հանդիպել նրանց, մենք յոյս ունենք, որ նրանք մեզ չեն նկատել։ Նրանք չեն պատկանում, այնպիսի մարդկանց կարգին, որոնց ողջոյնը մեզ բաւականութիւն պատճառէր։ Եւ մինչև չսկսվեն խարնակ օրեր մենք չենք սովորել նրանցը սիրել։ Այդպէս են թռչունները, մինչև չի գայ ձմեռը, չեն հասկանալ

թէ ինչու աւելի խոհեմութիւն կլիներ բոյն հիւսել մշտականաչ եղևնիների ոստերում։

ՓԵՍԱՅԱՅՈՒՆԵՐ։

III

Այժմ ձեր հերթն է, երիտասարդներ։ Մտածումէք արդեօք դուք նրա մասին, թէ ինչ տեսակ նիւթ են ներկայացնում կնութեան համար այդ թեթևամիտ արարածները, որոնց մասին դուք մտածում էք, և որոնց համար պատրաստել հազարաւոր յիմարութիւններ անելու։ Այո, նա շատ գեղեցիկ է և ինչպէս է հագնվում։ Ինչպիսի զարմանալի ճաշակ և հասկացողութիւն. (հետևանքը նուիրել կեանքը զարդարանքներին)։ Եւ նա ինչպիսի ցանկալի է շատախօս, զմայլեցուցիչ և սիրելի և պսակվելուց յետոյ էլ նա կլինի նոյնպէս սիրելի և սքանչելի, միշտ այդպէս գերազանց կլինի նրա զարդարանքները և աւելի շատ։ Բայց թէ որչափ սակաւ ուրախութիւն, որչափ սակաւ բաղդաւորութիւն է նա բերում իւր հետ ձեր կնանքի համար։ Հազարներով ուրիշների ամուսիններին կախարդի, բայց դուք նրանց մէջը

չէք լինի։ Դուք կշրջիք թատրոններում և խանութներում, կատարելու նրա բոլոր յանձնարարութիւնները և հաճոյքը և անվերջ վճարել հաշիւները։ Դուք յայտնվում էք ինչպէս թատրոնի կառավարիչ, հրաւիրելով ձեր սեփական կնոջը դերասանական ճանապարհորդութեան։ Նա ինչպէս տաղանդաւոր դերասանուհի, կներկայանայ իւր հրապուրիչ և կախարդիչ տեսքով ապշած ժողովուրդի առաջ։ Ամենքը կնայէին նորա վերայ, կհերանան նորանով, կսսեն սիլայիր խօսքեր։ Դուք ձեզ կըզգաք մի որ և է տեսակ բարերար ձեր մերձակայ, մարդկանց և կանանց, մանաւանդ առաջինների, ամենքին ձրի այդպիսի մեծ հաճոյք պատճառելու համար։ Բայց դուք ինքներդ հազիւ թէ դրանով բաւականութիւն ստանաք։ Ձեզ համար չի լինիլ այն զմայլեցուցիչ հայացքը, այն գրգռուած խորամանկ ժպիտը։ Դուք կտեսնէք միայն յոգնած, թրթռուն դէմքը, ձանձրացուած, շիջած աչքերը, գրգռուած մազերը և հնացած, մաշուած շորերը։ Եւ ճշհարիտ որ տանը նա ում համար հագնվի։ Միթէ ամուսնու համար։ Ոչ։ Այդ նշանակումէ որ Վարոտը իզուր փչացնել։ Բոլոր իր հրապուրանքը պահումէ նա հասարակութեան համար։ Բայց ձեզ, նրա ամու-

սնուն, սպասումէ գլխացաւանք, որը հետևանք է յոգնածութեան, անբաւականութեան, յանդիմանութեան, և որ ամենավատն է, չար, յամար լռութիւնը։ Ամբողջ օրուան յոգնածութիւնից յետոյ, որն որ աշխատել է դուրեկան և սիրելի երևալու։ Այդպէս դուրեկան է լինում տանը հանել դիմակը, և երևալ իր իսկական տեսքով, կամք տալով անկրթութեան, կոպտութեան և քմահաճոյքին։

IV

Լաւ է ապրել միասին. ոչ այնպեսիների հետ որոնք փայլում են հասարակութեան մէջ և լինում են հրապուրիչ հիւր գնացած ժամանակ, այլ նրանց հետ, որը կենդանացնում է և խնդութեամբ լցնում է ընտանի օջախը։ Ոչ միշտ զարդացած երիտասարդները և օրիորդները լինում են լաւ ուղեկիցներ կեանքի ասպարէզում։ Ընդհակառակը, պարզ, զօրեղները, հանդարտ բնութիւնաւորները ներկայացնում են աւելի հաստատուն տարր ընտանեկան երջանկութեան համար։ Այդպիսի մարդիկ ժպտալով կբացեն հովանոցը, երբ անձրև կսկսի, և անհերկիւղ կգնան ցեխի և քարերի

միջով, չընկնելով հոգւով և չկանգնելով կէս ճանապարհին և ձեզ տանել իւր հետ։ Այդպիսի մարդիկ միշտ պատրաստ կանգնած են, որ մեկնեն ձեզ իւրեանց ձեռքը և պահպանեն ձեզ, երբոր դուք կլոգնեք, և գիշերվա մթութեանը կփոխարինէ, պայծառ արեգակային օր։ Հենց այդպիսի մարդիկ ցուրտ քամուտակ։ Եւ միայն թշուառութեան և նեղութեան օրերում դուք տեսնում էք թէ նրանք որքան ուժեղ են և բարի։

Նրանք հաստատուն և յուսալի, իսկ դրանումն է ոչխարի և շան զանազանութիւնը։

Առհասարակ, կանայք աւելի հաստատուն են քան տղամարդիք։ Այնպիսի տղամարդիք որոնց վերայ կարելի լինի յոյս դնել, որոնց կարելի լինի հաւատալ, աշխարհումս շատ սակաւ են։ Նրանք շատ հազիւ են ունենում մի քիչ շան տեսակի առաքինութիւն։ Ընդհանրապէս նրանք աւելի մօտ են կատուի սերունդին. Դուք կարողէք ապրել քսան տարի նրանց հետ, անուանել նրանց սեփական և միևնոյն ժամանակ չէք կարող նրանց հաւատացած լինել։

Ներկայ դարում չկայ դպրանոց, որտեղ զարգացնէին տղամարդկանց մէջ այնպիսի յատկութիւն, ինչպէս հաւատարմութիւն։ Հին

ժամանակերում այդպիսի մարդկանց ստեղծում էր պատերազմը։ Ընդհակառակը ես ինքս ուրախ եմ, որ մենք ապրում ենք խաղաղ ժամանակում, որը կարողութիւն է տալիս անարգել նուիրել մեր բոլոր ոյժերը յաջողութեամբ միմիանց կողոպտելու։ Դրա շնորհիւ որ մենք, չենք վախենում, որ ամեն րոպէ կարող է պատերազմ ծագել, և ոչնչացնէ մեր բարեկեցութիւնը, մենք ունենք հնարաւորութիւն վարժվելու ազատ ժամանակ, խորամանկութիւն, հմտութիւն, շնորք կեղծելու, և մենք հասցնում ենք մեզ ծպրաածութեան զանազան առևտրական առաքինութիւնների, վերև յիշածների նման։ Մենք հպարտանում ենք ձեռքը առնելով արուեստական օրինաւոր խաբեբայութիւնը և յաջողակ տանելով առևտրական գործերը, հաշուելով արհամարվածք, կոպիտբանութեան դարում։

Շատ կարելի է ասելս ատերազմի դէմ, բայց բնութեան պատասխանատու աշխատանքը որ զարգացնում է մարդկանց, միայն պատերազմն է կարողացել առաջ բերել այն պակի մարդիկ, ինչ տեսակները որ պատահում էին դարերում։ Պատերազմը սովորեցէք մարդկանց անտարբերութիւն վտանգի րոպէում և հանդարտութիւն տանջանքի ժամանակ։ Պատերազմը

մարդուն ամրացրեց թէ հոգով և թէ մարմնով։ Նրա դաժան դասերը առաջացրին մարդու մէջ վստահութիւն և դիմացկունութիւն։ Հրեշաւոր պատերազմը մայր է այնպիսի ընտիր երեխաների, ինչպէս ասպետութիւն, հաւատարմութիւն, բարեպաշտութիւն։ Բայց պատերազմի միւս պարգևներից ես դասում եմ աւելի բարձր հաստատամտութիւնը։ Պատերազմը սովորացրեց առաջին անգամ մարդկանց հաւատարիմ լինել միմիանց հետ և պաշտպանել իւր դրոշակին մինչ արեան վերջին կաթիլը։

Խարոյկի վերայ այրված, գաղափարական նահատակները, աներկիւղ ծովագնացները, բնութեան հետ մարտնչողները և մեզ համար նոր աշխար բացողները, նորոգիզները, մեր առաջ բացող լոյսի և ճշմարտութեան ճանապարհը ուսումնականները, որոնք իւրեանց կեանքը նուիրել են գիտութեանը և արուեստին, այդ մութ դարերում, երբ գիտութիւնը և արուեստը չէին բերում, ինչպէս մեր օրերում, փառք և հարստութիւն, այլ միայն խայտառակութիւն և չքաւորութիւն,— այդպիսի մարդկանց կարողէր ծնել միայն սերունդը, որ նոր սովորած էր պատերազմի դաշտում ծիծաղել տանջանքի և մահվան վրայ

և կատարել իւր պարտականութիւնը մինչև վերջ։

Յիշում էք արդեօք մի ծերի սրտառուչ պատմութիւնը, որին համոզեցին ընդունել քրիստոնէութիւն և որ նոր յանկարծ մկրտութեան կարգ կատարելու ժամանակ հարցրեց։ Բայց ինչպէս, դուք ասումէք թէ դրախտի միակ ճանապարհը միայն մկրտութիւնն է։ Իսկ ինչ ճակատագրի հասան իմ ընկերները, իմ բարեկամները, որոնք իւրեանց հին հաւատով մեռան։ Որտեղ են նրանք։ Շփոթուած քարոզիչները պատասխանեցին, որ անկասկած, այն թշուառները գեհենի կրակումն են։ Դրա Պատճառով ասաց ծերը, մի քայլ յետ գնալով, ես չեմ ցանկանում մկրտվել։ Որտեղ իմ ընկերներս են, ես էլ այնտեղ կլինեմ։ Նա անցկացրեց նրանց հետ իւր ամբողջ կեանքը, նրանց շարքում պատերազմում էր և վճռեց գնալ նրանց յետևից ոչ թէ միայն աշխարհի ծայրը և աւելի հեռու-դժողքը։ Իհարկէ ծերը խելագար էր։ Բայց, ուղիղ, արժէ զոհել մեր լուսաւորութիւնով, եթէ կարելի լինէր այդ գնով վերադառնալ այն օրերին, երբ ստեղծվում էին այնպիսի մարդիք։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
Ա. անվ. А. Мясникяна
ՍՍՀՄ ԳԱ ՄԱՎԱՆ

3 Ար. 2Ի

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԱՎԱԲԵԱՆՑԻ.

Հ. ՄՈ ԳԻՆԸ
3 Ռ — Կ.

ԴԻՆՆ Է Կ

1. Խոլեր. . . . . 5.
2. Խրիմեան Հայրիկ 20
3. Պանդուխտ պատանի (սպառուած) . . . 70
4. Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնները 20
5. Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը, բայց դատաստանը շուտով չի անում Լ. Տոլստոյի 5
6. Երեք մահ Լ. Տոլստոյի 5
7. Ճշմարտութիւն 5
8. Շամախու աղէտը. 20
9. Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնները տպագր II 20
10. Պատկերներ Ռաֆֆու կեանքից 40
11. Երգիծաբանական հատուածներ Ց. Պարոնեանի 5
12. Որտեղ կայ սէր, այնտեղ է և Աստուած Լ. Տոլստոյի 5
13. Եղբայր եղբօրը դէմ Վ. Հիւգոի. . . . 10
14. Հարսնացու և փեսացու 5
15. Ուրիշի գերեզմանի վրայ արանց արտասուքի են լաց լինում . . . . . 10.

Որոնք կը պահանջեն մէկ մէկ օրինակ ճանապարհածախսը ուղարկողի վերայ. իսկ գումարով ցանկացողներին 25 դեղջ ճանապարհածախսով. մեր հասցեն. . . . . .

Тифлисъ улица Броссе № 23. А. А. Ованесянцъ

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

1035

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL1605936